

**«2020Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՅ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼ**

«2019թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 10-րդ պարբերաշրջանի 6-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Վեցերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Վեցերորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2021թ. հունվարի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում 2021թ. հունվարի 31-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդամիջով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

**«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՅ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼԻ
ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Հարց 1. Նշել, թե ո՞ր դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ կարող են տնտեսվարողները ճանաչվել որպես փոխկապակցված:

Հարց 2. Նշել այն դեպքերը, երբ համալիր հարկային ստուգման ժամանակ ստուգումն իրականացնող անձն իրավունք ունի հարկերը հաշվարկել անուղղակի մեթոդով:

Հարց 3. Նշել այն դեպքերը, երբ վարկի տոկոսը որպես ֆինանսական ծախս շահութահարկից նվազեցման ենթակա չէ:

Հարց 4. Արտադրական կազմակերպությունում նշվածներից որոնք են համարվում գործառնական

գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝

- ա) ապրանքների ձեռք բերման ժամանակ ակցիզային հարկի վճարումը.
- բ) ծառայությունների մատուցումից դրամական միջոցների մուտքերը.
- գ) հումքի, նյութերի գծով մատակարարին կանխավճարի տրամադրումը.

դ) բոլոր վերը նշվածներն էլ համարվում են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

Չարց 5. Անմիջականորեն սեփական կապիտալում ճանաչվող հողվածների գծով առաջացող ընթացիկ հարկի գծով ծախսը՝

ա) ճանաչվում է անմիջականորեն սեփական կապիտալում.

բ) ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում.

գ) ընդհանրապես չի ճանաչվում.

դ) դրա ճանաչումը հետաձգվում է մինչև համապատասխան հողվածների դուրս գրումը:

Չարց 6. Արտերկրյա գործակալի ֆինանսական հաշվետվությունները պետք է՝

ա) վերահաշվարկվեն այնպես, ինչպես եթե արտերկրյա գործարքները հանդիսանային հաշվետու կազմակերպության գործարքներ

բ) վերահաշվարկվեն այնպես, ինչպես եթե արտերկրյա գործարքները հանդիսանային հաշվետու կազմակերպության գործարքներ, բացառությամբ ոչ դրամային հողվածների, որոնք պետք է ներկայացվեն փակման փոխարժեքով

գ) վերահաշվարկվեն այնպես, ինչպես եթե արտերկրյա գործարքները հանդիսանային հաշվետու կազմակերպության գործարքներ, բացառությամբ դրամային հողվածների, որոնք պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով

դ) պետք է վերահաշվարկվեն այնպես, ինչպես եթե այդ գործարքները հանդիսանային արտերկրյա միավորի գործարքներ:

Չարց 7. Չբաշխված շահույթի հաշվին շահաբաժինների հայտարարում՝

ա) Դեբետ 529

Կրեդիտ 251.

բ) Դեբետ 344

Կրեդիտ 529.

գ) Դեբետ 342

Կրեդիտ 529:

Չարց 8. Հաշվետու ժամանակաշրջանի վերջում աշխատակիցների՝ առհաշիվ գործառնությունների գծով կրեդիտային մնացորդի ձևակերպումը որպես կրեդիտորական պարտք՝

- ա) Դեբետ 228
Կրեդիտ 528.
- բ) Դեբետ 528
Կրեդիտ 228.
- գ) Դեբետ 531
Կրեդիտ 228 :

Չարց 9. Արտադրանքի վաճառքի հետ կապված ծախսերի ձևակերպում՝

- ա) Դեբետ 712
Կրեդիտ 252.
- բ) Դեբետ 711
Կրեդիտ 252.
- գ) Դեբետ 521
Կրեդիտ 252 :

Չարց 10. Հիմնական արտադրությունում զբաղված աշխատակիցներին հասանելիք արձակուրդային

վճարների հաշվեգրման արտացոլում՝

- ա) Դեբետ 811
Կրեդիտ 527 .
- բ) Դեբետ 811
Կրեդիտ 425.
- գ) Դեբետ 811
Կրեդիտ 543:

**«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ VI ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

ՀՀ ռեզիդենտ «ԱՅԲ» ՍՊԸ-ն 2019 թվականին առանձնացել է «ԳՈՎ» ՓԲԸ-ից (առանձնացման ձևով վերակազմակերպում) և որպես առևտրային կազմակերպություն հիմնականում զբաղվում է առևտրային գործունեությամբ: Վերակազմակերպված ընկերության նախորդ 3 հարկային տարիների գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասը կազմել 12 000 հազար ՀՀ դրամ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է հետևյալ տեղեկատվությունը՝

Հ/Հ	Գործարք/Եկամուտ	Գումար / հազ. ՀՀ դրամ/	
1	Իրացումից եկամուտ /առանց ԱԱՀ/	45 000	45000
2	Իրացումից եկամուտ /արտահանում/	40 000	40000

3	Իրացում եկամուտ /մանրածախ վաճառք, ներառյալ ԱԱՀ/	72 000	60000
4	Անհատույց ստացված դրամական միջոց	12 000	12000
5	Հիմնադիրների կողմից կանոնադրական կապիտալի համալրում	20 000	-
6	ԱԱՀ-ի դեբետային գումարների հետ վերադարձ	4 500	-
7	Ակտիվների վերագնահատումից եկամուտ	1 200	-
8	Տոկոսային եկամուտ	1 000	1000
9	Վարձակալությունից եկամուտ	4 300	4300
	Ընդամենը		162300

Հ/Հ	Գործարք/ծախս	Գումար / հազ. ՀՀ դրամ/	Գումար / հազ. ՀՀ դրամ/
1	ՀՀ տարածքում իրացված ապրանքների ինքնարժեք	83 000	83000
2	ՀՀ տարածքում իրացված ապրանքների ինքնարժեք	28 000	28000
3	Վճարված աշխատավարձ	25 000	25000
4	Վարկի տոկոսային ծախսեր	4 500	-
5	Վարչական կարիքների համար ձեռքբերումներ	6 800	6120
6	Իրացման ծախսեր	7 700	7700
	Հաշմանդամներին վճարված աշխատավարձից նվազեցում		1125
	Հմ մաշվածություն		36000
	Ընդամենը		186945

Լրացուցիչ տեղեկատվություն՝

1. 2020թ.-ին հիմնական միջոցների մաշվածությունը կազմել է 36 000 հազ., սակայն մաշվածության մեջ ներառված հիմնական միջոցների մի մասը փաստացի չի աշխատել, որնց մասով մաշվածությունը կազմել է 7 800 հազ. ՀՀ դրամ:

2. Ստացված վարկն ամբողջությամբ տրամադրվել է հիմնադրին, որպես անտոկոս փոխառություն:

3. Աշխատավարձի ֆոնդի 3 տոկոսը վճարվել է հաշմանդամության կարգ ունեցող աշխատակիցներին:

4. Վարչական նպատակով կատարված ձեռքբերումների 10 տոկոսը փաստացի սպառվելու է հաջորդ տարվա ընթացքում:

Որոշել 2020թ.-ի հարկվող շահույթը/վնասը և վճարման ենթակա շահութահարկի գումարը:

Հարկվող շահույթը/ վնաս 162300-186945=-24645 /վնաս/

Արդյունքում կազմակերպության չծածկված վնասը՝ 36645